

ԱՐՄԱՆ ԱՄՐԻԿՅԱՆ

ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ԳՈՅԸ

ԱՐՄԱՆ ԱՄՐԻԿՅԱՆ



ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ԳՈՅԸ

(վիպակ և պատմվածքներ)

Երևան
ՀԳՄ հրատարակչություն
2009

ՀՏԴ 891.981-3 Ամրիկյան
ԳՄԴ 84Հ-4
Ա 536

Նվիրում եմ Նարինե, Անահիտ,
Արամ զավակներիս

Հրատարակվել է պետական
աջակցությամբ

Ամրիկյան Արման
Ա 536 Հավերժական գոյը: ֆանտաստիկ վիպակ
/Արման Ամրիկյան.- Եր.: ՀԳՄ հրատ., 2009.- 42 էջ:

Արման Ամրիկյանի (Արմենակ Մանուկյան) «Հավերժական Գոյը» մանկապատանեկան ֆանտաստիկ վիպակում գեղարվեստական ուրույն ոճով ներկայացված են նախնադարից մինչև Ավարայրի ճակատամարտը ընկած ժամանակահատվածի հայ ժողովրդի համար ուշագրավ իրադարձությունները, որի ականատեսն ու մասնակիցն է վիպակի գլխավոր հերոս, հայ ժողովրդի հավերժության գաղափարը ներկայացնող Գոյը:

ՀՏԴ 891.981-3 Ամրիկյան
ԳՄԴ 84Հ-4

ISBN 978-9939-58-049-4

© ՀԳՄ հրատ., Ամրիկյան Ա., 2009

ԳՈՅԸ

Գո՜յ, Գո՜յ,- ձայն էր տալիս անհանգստացած Հայը: Տղան չէր պատասխանում: Փորձանք է բերելու այդ անհնազանդ տղան՝ ներքուստ բարկանում էր մայրը՝ Հայը: Կարծես չի կարող քարանձավի մոտ խաղալ: Խոսք չի լսում: Վերջը գիյերի՝ թրավագրերի կամ այլ գազանի կեր է դառնալու: Մութ է արդեն, իսկ այդ տղան չկա ու չկա:

Երկու մեծ ու փոքր գագաթներով Մա և Սի սարերի լանջերը դարձել էին մի քանի ցեղախմբերի բնակատեղի: Ընդարձակ քարանձավներն ապահովում էին նրանց արտաքին վտանգներից:

* * *

Փոքրիկ Գոյը շատ էր սիրում թափառել Մա և Սի սարերի ստորոտում տարածված անտառներում ու դաշտերում: Գիշատիչ գազաններ՝ ինչքան ուզես: Բայց նա արդեն գիտեր, որ հարկավոր է ընդամենը շատ ուշադիր լինել, որի դեպքում ցանկացած հանգամանքում միշտ էլ հնարավոր կլինի պաշտպանվել, ծայրահեղ դեպքում՝ փախչել: Սիրելի թրավագրը՝ փոքրիկ Գիյը, արդեն մեծացել՝ ու դարձել է նրա հաճախակի թափառումների մշտական ուղեկիցը: Ո՞ւմից վախենա, երբ՝ կողքից քայլում է իր փառավոր ընկերը, որին նա գտավ փոքրիկ ու անուժ վիճակում: Նա անկասկած մյուս գիշատիչների կերը կդառնար, կամ իր ցեղակիցներից մեկը կգտներ և կտաներ ընկերներին՝ որպես ճաշ: Գոյը գիտեր, եթե իմանան, որ անուժ, փոքրիկ Գիյին գտել և չի տարել քարանձավ՝ ապա կպատժեն ու որոշ ժամանակ կզրկեն ընդհանուր որսի իր բաժնից: Բայց ինչպե՞ս զոհեր տխուր ու խելոք աչքերն աղերսագին իրեն հառած Գիյին: Հիմա Գոյը հպարտ էր, որ պահել ու պաշտպանել է իր ընկերոջը, որի հետ գրեթե՝ հանդիպում էր ամեն օր :

Գոյը բարձրացել էր ընդարձակ դաշտավայրի եզրին աճած հսկա ծառերից մեկի վրա՝ և ուշադիր հետևում էր Գիյի հերթական որսին: Գոյը և Գիյը շատ էին սիրում մեծ ու լայն գլխի՝ երկու կողմերում

փռված եղջյուրներով, սլացիկ քայլվածքով, այս դաշտավայրում մշտապես արածող այդ կենդանիների փափուկ միսը:

Գիյը փչող քամու հակառակ կողմից գաղտագողի շարժվելով՝ մոտենում էր դեռևս ոչինչ չկասկածող, հանգիստ արածող լայնաեղջերավորին:

Սրընթաց, կարճատև և ճիշտ հաշվարկված թռիչք: Որսը տապալված էր: Գիյը բռնեց իր զոհի կոկորդից, որից ծորում էր թարմ, ախորժալի արյունը, ապա գլուխը դարձրեց հաստաբուն, բարձր ծառին նստած Գոյի կողմը: Վերջինս ոգևորված կանչեց.

- Հա՛, հա՛, - և հաղթանակի բերկրանք արտահայտող կոչերով արագորեն իջավ իր դիտակետից ու վազելով միացավ ընկերոջը, որն արդեն ախորժակով վայելում էր հմտորեն ձեռք բերած որսի միսը:

* * *

Երբ Գոյը մոտեցավ իրենց գիշերային կացարանին՝ քարանձավին, նրա առջևի մեծ քարն արդեն ծածկել էր մուտքը: Այն ամեն օր փակում էին, որպեսզի ապահով լինեն գիշերային անկոչ հյուրերի հանկարծակի հարձակումներից:

Անսպասելի հարվածը ցած գլորեց տղային: Հայն էր՝ իր բարի մայրը, որը չէր մտել քարանձավ և դրսում, վտանգելով կյանքը, սպասում էր ուշացած որդուն:

- Կուտեն, մի օր կուտեն քեզ այդ գազանները,- զայրացած գոչեց կինը,- քանի անգամ ասեմ, թե մենակ մի գնա:

- Ինձ չեն ուտի, Հայ,- վստահ գոչեց ոտքի կանգնած տղան,- ես գիտեմ նրանցից փախչելու ձևը, ես հավատարիմ Գիյ ունեմ:

- Դու փոքր ես ու թույլ,- գլուխն օրորեց Հայը,- Աստան անտառում քեզ է փնտրում:

- Դե, ուժեղները պետք է ուտեն թույլերին,- ասաց տղան,- տե՛ս, գազանների մոտ, երկնքում թռչողների մոտ և նույնիսկ ջրում լող տվողների մոտ այդպես է: Ուժեղը երկար ու կուշտ է ապրում, իսկ թույլը, եթե ճարպիկ չէ՝ պետք է դառնա ուժեղի զոհը:

- Բավական է խոսես,- բարկացավ Հայը,- արի մոտենանք անտառին ու ձայն տանք Աստային, չէ՞ որ նա էլ է քո ծնողը:

Ցեղի առաջնորդը Նայը՝ այդ բարձրահասակ, հզոր մկաններով հսկան, արդեն չգիտեր ինչ անել Հայի ու Աստայի հետ: Ցեղախմբում, մայրերը չէին առանձնացնում իրենց զավակներին, առավել ևս, որ ոչ մի տղամարդ հստակ չգիտեր, թե որն է իր զավակը: Դա ճիշտ էր



և ամրացնում էր տոհմի պաշտպանունակությունը, քանի որ բոլորն անխտիր ընդհանուր հույսեր ունեին, ընդհանուր խնդիրներ: Առողջ տղամարդիկ որս էին անում և պաշտպանում կանանց, երեխաներին ու թույլերին, կանայք բույսեր էին հավաքում ու հետևում երեխաներին: Իսկ այս խենթ Հայը առանձնացել է Աստայի հետ, նրանից է միայն երեխաներ ունենում և այլ տարօրինակ բաներ անում: Նրանց ծնած Մեյը վերցրեց աղջիկներից մեկին և հեռացավ: Հիմա երկուսով են ապրում: Բայց ինչքա՞ն պետք է դիմանան առանձին: Եվ այդ ամենը Հայի անհասկանալի վարքագծից է գալիս:

Վերջապես լսվեց Աստայի ձայնը, ու նա մոտեցավ անտառի եզրին կանգնած մորն ու որդուն, բռունցքը բարկացած իջեցրեց վերջինիս գլխին:

- Աստա՛,- իսկույն հոր և որդու մեջտեղը կանգնեց Հայը,- ես արդեն խրատել եմ: Ավելի լավ է, մտածենք՝ ինչ անել, չէ՞ որ քարանձավի մուտքը մինչև առավոտ չի բացվի:

- Լավ,- մռնչոցի նման գոչեց Աստան,- ես տեսա Մեյին, գնանք նրանց փոքրիկ կացարանը, նա մեզ սպասում է:

* * *

- Նայ, Նայ, թող ե՛ս ղեկավարեմ այս որսը,- աղաչում էր Պոյը:

- Հանգիստ թող, չէր համաձայնում առաջնորդը,- մամոնտին կփախցնես ու մենք սոված կմնանք:

- Նայ, թող,- չէր հանդարտվում Պոյը:

Պոյը, վերջերս տղամարդ դարձած կարճահասակ, ջլապինդ այդ ռազմիկը, անչափ ցանկանում էր ամեն տեղ առաջինը լինել: Հարևան ցեղի հետ կռիվներում նա արդեն իսկ ցույց էր տվել իր քաջությունը, սակայն ցեղակիցների աչքում մեծագույն հարգանք էին վայելում հաջող որսի կազմակերպիչները, որոնք ընտրվում էին Նայի կողմից:

- Ո՞ւր ես շտապում, կգա և դրա ժամանակը,- զրույցը կտրուկ վերջացրեց Նայը և սկսեց ուշադիր հետևել ցեղակիցների հսկա կնճիթավորին դեպի նախօրոք փորած և խոտ ու ճյուղերով խնամքով ծածկած փոսը մղելու ջանքերին: Վայրի աղմուկը շփոթեցրել էր հսկայամարմին կենդանուն և նա սկսեց տեղից շարժվել դեպի ուղղակը:

- Լավ է,- գոհ կանչեց առաջնորդը,- նայիր, սովորիր Պոյ:

- Ի՞նչ սովորեմ, ես դա վաղուց գիտեմ:

- Վերջացրու, տուր մեր մահակները, մամոնտը հիմա կընկնի

փոսը, այ այդտեղ է պետք՝ մեր ուժը և ունակությունը, որ կարողանանք շշմեցնել նրան: Զգույշ կլինես: Ինչքան կարող ես՝ մեծ քարեր հավաքիր փոսի մոտ, որ հեռվից հարվածենք և մեզ շատ չվտագենք: Լավ է, երկու օր կուշտ կլինենք:

* * *

Քարի և մահակների հարվածների տարափը վերջիվերջո տապալեցին հսկային, որն այժմ՝ որպես մսի մեծ պաշար, ընկած էր քաջ որսորդների ոտքերի մոտ:

Կանանց ու երեխաների աղմկալի ամբոխի առաջն ընկած՝ մոտեցավ Շամը, երկարամորուս, արդեն հասակն առած այդ տղամարդը, որ ցեղի սիրելին էր: Նա էր պահպանում իրենց գլխավոր պաշտամունքի առարկան՝ հսկա մողեսագլուխը և վերջինիս օգնական այլ մանր ու մեծ կենդանիների գանգերը, որոնք դժվարին պահերին, Շամի հմայությունների ազդեցությամբ, օգնության էին հասնում ցեղախմբին: Հատկապես, երկար ժամանակ անհաջող որսի պայմաններում Շամը ոտքի էր հանում իրենց համար՝ անհայտ ինչ որ ոգիների, և անձամբ առաջնորդելով, գտնում էր թե՛ որս, թե՛ կյանքի համար անհրաժեշտ այլ սնունդ: Այսօր Շամը կրկին դիմեց իր հմայություններին: Այդ տարօրինակ մարդը ամենքի աչքի առաջ, բոլորի բացականչությունների տակ փոխակերպում էր գլուխը՝ նմանվելով իրենց պաշտամունքի առարկային՝ մողեսագլխին, ապա կրկին ստանում իր նախկին կերպարանքը:

Տայը՝ կարճահասակ, վտիտ և ամբողջովին մազածածկույթի տակ կորած Տայը, նախանձից պայթում էր: Ինչո՞ւ պետք է այսքան հարգեն Շամին, և ոչ թե իրեն, ինչո՞ւ է նա այդքան բարի ու հոգատար: Նրան զայրացնում էր այն, որ Շամը, փոխանակ հավաքեր ամեն բան, ինչ նրան սիրով տրամադրում էին ցեղակիցները, ընդհակառակը, ինքն էր դժվարին պահերին օգնության հասնում նրանց: «Թող կորչի: Ես կգրավեմ նրա տեղը: Ես կիմանամ, թե ինչպես է նա փոխակերպում իր գլուխը և բոլորին բուռս կհավաքեմ, բոլորն ինձ կբերեն այն ամենը, ինչ կամենամ, բոլորը, նույնիսկ Նայը կենթարկվի ինձ: Իսկ հիմա, ես նրան հավատարմություն ցույց կտամ, ես նրա հեզ ծառան կլինեմ, մինչև գա իմ ժամանակը»:

Հմայությունից հետո Տայը իրեն նետեց դեպի Շամի ոտքերը և դրանք համբուրելով գոչում էր.

- Մեծ ես, մեծ ես, մեր պաշտելի Շամ:

Նայը հարգալից մոտեցավ Շամին և նրանք ցածր ձայնով ինչ-որ խոսքեր փոխանակելուց հետո՝ հայացքներն ուղղեցին դեպի Պոյը:

- Դու քաջություն ու հմտություն ցույց տվեցիր այսօրվա մեծ որսին տիրանալու համար, քեզ է տրվում որսաբաժինն առաջինը վերցնելու պատիվը,- բարձրաձայն հայտարարեց Նայը:

Պոյը հանկարծակիի եկած՝ երախտագիտությամբ նայեց նրանց կողմը և հպարտ մոտեցավ մամոնտի դեռևս տաք մարմնով լցված փոսին: Ցատկեց ներքև: Քարե դանակով հսկա մարմնից վարպետորեն անջատեց կնճիթը, դուրս եկավ փոսից ու ավարը գլխից վեր պահած՝ քայլեց դեպի ցեղապետն ու Շամը, ապա կնճիթը զգուշորեն իջեցրեց Նայի ոտքերի մոտ, և կանգնելով, գոչեց.

- Առաջինն՝ առաջինին:

Նրանց շրջապատող ամբոխը բարձր կոչերով ողջունեց քաջ ռազմիկի հարգալից արարքը:

* * *

Գոյը չնկատեց թե ինչպես ամպերը ծածկեցին երկինքը: Գիյի հետ վազում էին ծառախիտ, փարթամ անտառում, երբ լսվեց ամպի գոռոցը: Գոյը քաշվեց մի մեծ ծառաբնի մոտ՝ պատսպարվելով առատորեն թափվող անձրևից: Կայծակ, կրկին կայծակ, որոտ, կրկին որոտ: Գոյը դողալով գրկեց իրեն մոտեցած Գիյին, որը դժգոհ մռնչում էր ամեն որոտից հետո: Հանկարծ շուրջ բոլորը բռնկվեց հուր ու կրակով: Գոյն առաջ հեռվից էր տեսել այդ տարօրինակ կրակը և չէր պատկերացնում, որ այն կարող է այդպես այրել: Գաղջ օդը խեղդում էր: Գիյը թափ տվեց իրեն, ապա գլուխը կիպ կպցնելով Գոյի ոտքերին, սկսեց հրել նրան՝ ուղղություն տալով դեպի մի քանի քայլ այն կողմ հոսող լայնահուն գետը: Գոյն հասկացավ իր բարեկամին: Նրանք սլացան դեպի գետը և առանց մեկ ակնթարթ իսկ կորցնելու, նետվեցին ջուրն ու հոսանքի ուղղությամբ լողացին ներքև: Բոլոր ծառերն ու թփերը պատվել էին կրակի լեզուներով, գետի ջուրն արտակարգ տաքացել էր, սակայն կրակի լեզվակները չէին հասնում ներքև լողացողներին...

* * *

Մեկ օր անց, անբաժանելի զույգը զգույշ քայլում էր այրված ածուխների վերածված անտառի այն հատվածով, որտեղից մազապուրծ փախել էր: Ածուխների մեջ մխում էին այրված կենդանիների մարմինները, որոնցից, Գոյի համար խիստ անսովոր, բայց ոչ տհաճ հոտ էր տարածվում: Ահա խորովված վայրի վարազի մարմինը: Գոյը զգուշորեն մոտեցավ և ձեռքով սկսեց շոշափել այն: Փափուկ էր և հեշտությամբ պոկվող: Տղան հանկարծ քաղց զգաց և վարազի մարմնից պոկած միսը մեքենաբար տարավ բերանը: Յուղալի մսի կտորը հաճելիորեն հալվեց բերանում: Նա կրկին միս պոկեց և կրկին դրեց բերանը: Առաջին պահի տհաճությունն անցել էր, և Գոյը զարմացած հասկացավ, որ այս միսն ավելի համեղ է, քան հում, արյունալի միսը, որին իրենք սովոր էին: Նա ձեռքով արեց Գիյին, և երբ նա մոտեցավ, խորոված մսի կտորը դրեց նրա բերանը: Թրավագրը մի պահ ծամեց միսը, ապա տհաճորեն դուրս թքեց:

- Ի՞նչ է, չհավանեցի՞ր,- զարմացավ Գոյը,- բայց չէ՞ որ համեղ է: Դու ոչինչ չհասկացար: Սա ավելի համեղ է, քան որսի արյունոտ միսը,- ապա թափ տվեց ձեռքը, կռացավ, վերցրեց խորոված վայրի վարազի մարմինը և մի կերպ վերցնելով մեջքին, քայլեց դեպի քարանձավը:

- Հայն ու Աստան գոհ կլինեն: Սա շատ համով է,- վստահ ասաց տղան իր առջևից քայլող Գիյին,- առաջ, ես նվեր կանեմ նրանց, լավ, համով նվեր...

* * *

Գոյի բերած խորոված վարազը զարմանք առաջացրեց քարանձավում: Նայը հարցական նայում էր այդ տարօրինակ տղային, որը միշտ ինչ-որ մի նոր բան էր հորինում:

- Առաջնորդ, ես կերել եմ, շատ համով է,- ասաց տղան և, ձեռքով հեշտորեն պոկելով ամենալավ կտորը, մոտեցավ Նային,- կեր, ես կերել եմ:

Նայը զգուշորեն նայեց Շամին: Վերջինս, չգիտես ինչու, ժպտում էր: Դա համարձակություն ներշնչեց առաջնորդին, որը ոչ մի պայմանով չէր կարող ցույց տալ իր երկմտանքը:

- Տուր, տուր տեսնեմ,- վստահ ասաց նա,- մենք այսօր այդ շանթ ու որոտի հետևանքով առանց որսի ենք մնացել: Բոլոր կենդանիները փախել են մոտակայքից:

Առաջնորդը վերցրեց մսի կտորը և տարավ բերանը: Բոլորը լարված հետևում էին նրան: Արագ ծամեց և կուլ տվեց առաջին կտորը, հետո կրկին կծեց ու նոր կտորը կուլ տալուց հետո զարմացած գոչեց.

- Լավն է, շատ լավն է:

Այդ օրը ցեղակիցները կուշտ կերան Գոյի և մյուս տղաների բերած խորոված կենդանիների միսը: Քարանձավում տոնական տրամադրություն էր տիրում:

* * *

Շամն իր մոտ կանչեց Գոյին:

- Լավ, է տղա՛ս, դու, այդքան փոքր լինելով՝ կարողացար կերակրել բոլորիս, այժմ ինձ պատմիր, թե ինչպես էր իրեն պահում այդ զարմանահրաշ կրակը, որի մեջ դու լող էիր տալիս:

- Օ՜, մեծ Շամ, ես կդժվարանամ նկարագրել այն: Արի միասին գնանք այնտեղ: Ես կարող եմ կրակ սարքել, իսկ դու կտեսնես:

- Ի՞նչ, դու կարող ես կրա՞կ սարքել:

- Կարող եմ,- վստահ ասաց տղան,- միայն շուտ գնանք, որ տաք ածուխ գտնենք:

Շամը իսկույն ոտքի կանգնեց:

- Գնացինք,- ասաց նա և առաջ ընկավ:

Գոյը տեսել էր, թե ինչպես հրաշքով դեռ չայրված ծառի ճյուղը պոկվեց ու ընկավ ներքևում ծխացող ածուխների մեջ և մի փոքր անց, ի զարմանս իրեն, սկսեց կրակ արձակելով այրվել: «Գուցե փորձեմ»,- մտածեց նա և վազելով հեռացավ այրված անտառից: Առաջին հանդիպած, չայրված ծառից պոկեց մի ճյուղ ու արագ վերադարձավ ու չոր ճյուղը մոտեցրեց ածուխին: Չվառվեց: Ապա, ինչ որ որոշում կայացնելով, գնաց այն ածուխների մոտ, որոնց վրա մի քիչ առաջ ընկել էր ծառի ճյուղը: Ճյուղի ծայրը ածուխների մեջ խրած որոշ ժամանակ պահելուց հետո հանկարծ կրակը բռնկվեց: Գոյը վախից ցած շպրտեց ճյուղը, որն արագ այրվեց...

Շամը և նրա հետ եկած ցեղակիցները վախից կռացան, մի քանիսը վախեցած փախան:

Գոյն ասես իրենցից մեկը չլիներ: Նա վստահ բռնել էր հրաշքով այրված ճյուղը և հպարտորեն նայում էր Շամին:

Զարմանքն ու վախը հաղթահարելով, Շամը մոտ եկավ և իր հետ վերցրած ծառի ճյուղը մոտեցրեց տաք ածուխին: Կրկնվեց նույն հրաշքը. ճյուղը բռնկվեց...

Դրսում մութ էր և ցուրտ: Շամը սիրալիր նայեց Գոյին, ապա հայացքն ուղղեց քարանձավի կենտրոնում՝ կրակի օջախի մոտ տաքացող իր ցեղակիցներին:



Հրաշք էր տեղի ունեցել, որը մարդկանց օգնելու էր ավելի հաջող դիմակայելու իրենց ամեն օր անակնկալներ մատուցող բնության երևույթներին:

Գոյը գրկել էր Հային և մուշ-մուշ քնել:

* * *

Մի քանի օր էր, ինչ ոչ մի որս չէր հաջողվում: Քաղցած ցեղակիցները շրջապատել էին Շամին, որը փորձում էր շարժել մողեսագլխի գքությունը: Տայը մոտենում էր մերթ մեկին, մերթ մյուսին և շշնջում ականջներին, որ Շամն ուժը կորցրել է, մողեսագլուխն այլևս չի լսում նրան: Անցավ ևս երկու օր: Նայը հուսալքված նստել էր հանգած կրակի օջախի մոտ: Ինչքան փորձեց դուրս գալ որևէ կենդանու հետքի վրա՝ չհաջողվեց: Պոյը ևս գլխիկոր քայլում էր քարանձավում. առաջնորդն իրեն թույլ տվեց մի խմբի հետ առանձին ցույց տալ հմտությունը, իսկ ինքը չկարողացավ որևէ օգուտ տալ:

Քարանձավ մտավ մռայլված Շամը: Ցեղակիցները խեթ-խեթ նայեցին նրան: Տայի ջանքերը զուր չէին անցել: Իսկ Տայն իր շուրջն էր հավաքել առավել դժգոհներին:

- Ինչո՞ւ է մեզնից երես դարձրել մողեսագլուխը,- լսվեց նրա շուրջը հավաքված խմբից:

Նույն տեղից մեկ ուրիշ ձայն գոչեց.

- Նա չի վստահում Շամին:

Քարանձավը լցվեց դժգոհ բացականչություններով:

Շամը լուռ կանգնած էր: Այս ի՞նչ է կատարվում: Մի՞թե սրանք իր ցեղակիցներն են, մարդիկ, որոնց բազում անգամներ օգնել է, բուժել հիվանդներին, ծանր ժամանակներում գտել կերակրվելու միջոցներ... Այս ի՞նչ պատահեց: Իհարկե՝, դժվար է, բայց չէ՞ որ իրենք առավել դժվար օրեր են հաղթահարել: Նայը զարմացած անզոր հայացքով նայում էր ցեղակիցներին: Եթե պաշտպանի Շամին, բոլորն իր վրա կհարձակվեն, դա նաև իր վերջը կլինի: Ավելի լավ է՝ չպաշտպանի Շամին, թեև հասկանում է, որ նա ոչ մի մեղք չունի: Նա առավել զգուշացավ, երբ նկատեց, որ իր կողքից կամաց-կամաց հեռանում են ցեղակից որսորդները: Մնացել էին միայն երիտասարդ Պոյը և Աստան:

- Պետք է զոհ մատուցել մողեսագլխին,- լսվեց փրչոտ Տայի շրջապատից,- նա զոհ է ուզում:

Բոլորի հայացքներն ակամա շրջվեցին դեպի Շամը, որը համառորեն լռում էր: Ծուռոտն և մազախիտ Տայն առաջ եկավ ու մատն ուղղելով դեպի Շամը, որին մինչ այդ միայն քծնել էր , ճղճղան ձայնով գոչեց.

- Նա՛յ, պետք է զոհ մատուցել մողեսագլխին, ահա զոհը, որին նա կընդունի:

Քար լռություն տիրեց և բոլորը շրջվեցին դեպի առաջնորդը:

Նայը հիշեց, թե ինչպիսի դժվարությամբ և խորամանկություններով ինքը և իր ամենախելոք ու վստահելի խորհրդականը՝ Շամը, կարողացան համոզել մարդկանց, որ մողեսագլուխը չի ընդունում մարդկային զոհ: Բայց ինքը կանգնել է սոված ու բորբոքված ցեղակիցների առաջ, որոնք պահանջում էին Շամին: Գուցե կռվի: Ինչքան էլ ուժեղ լինի, միևնույն է՝ երկու մարդու օգնությամբ ինքը չի կարող հաղթել նրանց: Այլ ընտրություն չկա, հարկ է զոհել հավատարիմ խորհրդականին, որպեսզի չկորցնի կյանքն ու իշխանությունը:

- Իսկ ո՞վ պետք է կատարի զոհաբերությունը,- պարտված ձայնով, առանց գլուխը բարձրացնելու, հարցրեց Նայը:

- Տա՛յը, Տա՛յը,- լսվեցին բացականչությունները:

- Մարդիկ,- վերջապես խոսեց մինչ այդ համառորեն լռող Շամը,- լսեք վերջին խոսքս: Ես պատրաստ եմ հանուն ձեզ զոհվել մողեսագլխի գութը շարժելու համար: Բոլորդ դա լավ գիտեք: Բայց հիշեք: Եթե ինձ փոխարինողը ազնիվ և մաքուր մարդ չլինի, ապա Մեծ մողեսագլուխը նրան անխնա կպատժի: Լսո՞ւմ ես Տա՛յ, անխնա՛:

Մի պահ լռություն տիրեց, ապա գազազած ամբոխն իր մեջն առավ Շամին և Տայի գլխավորությամբ շարժվեց քարանձավից դուրս գտնվող, մողեսագլխի երկար ժամանակ անգործության մատնված զոհարանի դաշտ...

* * *

Գոյն արդեն սովորական դարձած հրաժեշտի գոչյունով ձայնեց Գիյին, որն ի պատասխան մռնչաց և շրջվեց դեպի անտառը: Լայնաեղջյուրը շատ ծանր էր: Գոյը դժվարությամբ այն հասցրեց քարանձավի մուտքի մոտ և ձայնեց.

- Հե՛յ, ո՞վ կա այդտեղ, եկեք օգնեք:

Ոչ ոք նրան չպատասխանեց: Զարմացած Գոյը ցած իջեցրեց իր ծանր բեռը և արդեն ուզում էր մտնել քարանձավ, երբ լսեց մոր ձայնը:

- Գոյ, արի ինձ մոտ, շուտ արի:

Տղան շտապեց մոր մոտ:

- Ես Գիյի օգնությամբ կարողացա որս անել, ուստի երկար բացակայեցի:

- Գոյ, գիտեմ՝ շատ ես տխրելու, բայց Շամին զոհեցին մողեսագլխին:

- Ի՞նչ,- թռավ տղայի բերանից և նա ծանր ընկավ խոտերի վրա:

- Թուլանալու ժամանակը չի, վեր կաց և հասիր Նային: Լավ է, որ որս ես բերել, եթե ոչ՝ նրա վրա էլ էին հարձակվելու:

* * *

Մի քանի րոպեում լայնաեղջյուրից միայն ոսկորները մնացին: Նայը մոտ կանչեց Գոյին:

- Դու երկար բացակայեցիր: Ասում են՝ շրջակայքում մարդակեր շեղագլուխներն են երևացել: Չե՞ս տեսել:

- Չէ, առաջնորդ: Բայց ինչո՞վ ենք մենք նրանցից տարբերվում,- տխուր՝ գլուխն օրորեց տղան:

Նայը չհասցրեց պատասխանել, քանի որ քարանձավի առջև հավաքված ցեղակիցների գլխին ասես երկնքից քարերի հեղեղ թափվեց:

- Շեղագլուխները,- գոչեց Նայը և ոտքի թռավ:

Կանայք ու երեխաները վայնասունով լցվեցին քարանձավ, իսկ Նայի շուրջը մահակներով հավաքված որսորդները մարտական դիրք ընդունեցին:

- Պոյ, վերցրու մի խումբ և անցիր բացատի կողմը: Չթողնես առաջ գան,- կարգադրեց առաջնորդը, ապա վստահ հայացքով նայեց շուրջը: Բոլորը պատրաստ կանգնած՝ հարձակման էին սպասում, և միայն մողեսագլխի գլխավոր միջնորդ Տայն էր անհետացել: Առաջնորդն ուզում էր ձայն տալ նրան, որ, ինչպես ընդունված էր, Տայը՝ Շամի նման, մողեսագլուխը ձեռքին գա և կանգնի իր կողքին, բայց այդ պահին լսվեցին շեղագլուխների գոռգոռոցները ու կռիվը սկսվեց:

Առաջինը փախան Պոյի խմբի վրա հարձակվողները: Պոյը թրավագրի կատաղությամբ ու ճարպկությամբ ջարդում էր մարդակերների գլուխները: Մյուս կողմում կատաղի կռիվ էր տալիս Աստան, որի խմբի վրա մեծ բազմություն էր հավաքվել: Թվում էր, թե նա տեղի է տալիս: Նայը, դեն շպրտելով իր վրա նետված երկու հակառակորդներին, քայլերն ուղղեց Աստայի խմբի կողմը, բայց այդ պահին Հայի առաջնորդությամբ՝ մահակները ձեռքերին, քարանձավից դուրս եկան մի խումբ երիտասարդ կանայք և վայրենի ճիչերով օգնության նետվեցին Աստայի խմբին: Հայն ու Աստան միացյալ ջանքերով ետ շպրտեցին՝ շփոթված շեղագլուխներին...

* * *

Նայը հոգնած նստել էր քարանձավի առաջ գտնվող քարին: Մոտեցավ Պոյը:

- Սպանվել են Միյը և Կեյը,- ասաց նա,- փնտրում են Տային, որը կորել է: Սրանց բազում լեշերի հետ ի՞նչ անենք:

- Թող գցեն գետը՝ ջրամողեսներին կեր,- հանկարծ հառաչեց առաջնորդը,- ինչպե՞ս կործանեցինք Շամին:

Հեռվում, խիտ ծառերի ետևից հայտնվեց շուրջը վախվորած նայող Տայը:

Նայն ու երիտասարդ որսորդը լուռ նայեցին իրար և գլուխները կախեցին:

* * *

Նայը սկսել էր մեծ ուշադրություն դարձնել գեղեցկուհի Կիյին: Վերջինիս խոսքը կարևորվում էր առաջնորդի համար:

Գարուն էր: Տաք արյունը խաղում էր մարդկանց երակներում, և կին ու տղամարդ ուզում էին դուրս գալ անտառ և առանձանալ:

Նայը մոտեցավ քարանձավի պատին սուր քարով ինչ-որ բան գծող Ային: Վերջինս թողեց զբաղմունքը և ետ քաշվեց. պատին երևացին մարդուկների և կենդանիների պատկերները:

- Սա ի՞նչ է,- հարցրեց զարմացած Նայը:

- Որսորդներ են, իսկ սրանք՝ լայնեղջյուրներ և թրավագրեր,- բացատրեց Այը:

- Իսկապես,- կրկին զարմացավ Նայը,- որս են անում:

Հետո թփթփացրեց Այի մեջքին և գնաց կանանցով շրջապատված Կիյի կողմը: Բոլորը ետ քաշվեցին:

- Կիյ, այդ ի՞նչ ես գցել վզիդ,- շարունակեց զարմանալ Նայը:

Կիյը վզից հանեց փայլուն քարերից պատրաստված ուլունքաշարը և մեկնեց առաջնորդին՝ ասելով.

- Այն է նվիրել, սիրուն է, չէ՞:

- Սիրուն է, շատ սիրուն,- հետաքրքրությամբ շոշափելով փայլուն քարերը՝ համաձայնեց Նայը: - Իսկ դրսում արդեն տաք է,- չգիտես ինչու, ետ տալով ուլունքաշարը՝ ասաց նա:

* * *

Կրկին փախուստ: Նայը կատաղած քայլում էր քարանձավում և չգիտեր ինչպես զսպի իրեն: Ի՞նչ օրի հասավ: Փոխանակ Կիյը հպարտանար, որ իր ուշադրությունը գրավել է և օգտվեր որոշ ժամանակ առաջին կինը լինելու հանգամանքից, փախել է: Գնացել է, և այն էլ՝ ո՞ւմ հետ: Այդ նիհարակազմ, որսից ոչ մի կերպ գլուխ չհանող, միշտ ինչ-որ անհասկանալի բաներ հորինող Այի հետ: Դե արի ու գլուխ հանիր այս կանանցից: Նրան մտորումներից հանեց Աստան.

- Նայ, գիտեմ, որ բարկացած ես, բայց լսիր ինձ: Պետք չէ հետապնդել և բռնել Կիյին ու Ային: Նրանք ճիշտ են վարվել:

- Ի՞նչ ճիշտ, քո և Հայի գլուխն է մտել, թե առանձին պետք է ապրել: Իսկ ո՞նց են պաշտպանվելու թշնամիներից, գազաններից, ո՞նց են սնունդ գտնելու:

- Չէ՞ որ իմ որդին՝ Մեյը, ապրում է: Ե՛վ սնունդ է ճարում, և՛ պաշտպանվում, իսկ եթե մեծ վտանգ լինի, պաշտպանվելու համար կմիանա մեզ՝ ինչպես շեղագլուխների հարձակման ժամանակ:

- Այդպես կկործանվեք,- չհամաձայնվեց Նայը,- բաժան-բաժան կկորչեք:

- Չենք կորչի: Գիտե՞ս ինչ հաճելի է միշտ մեկի հետ լինելը, իմանալ, թե ով է քեզնից մողեսագլխի կամքով աշխարհ եկել:

- Չգիտեմ, գուցե ինչ-որ բան դեռ չեմ հասկանում,- խոստովանեց Նայը,- ես Պոյին կասեմ, որ այլևս չփնտրեն Կիյին ու Ային:

* * *

Տայը ցնծում էր: Նորից և նորից էր հաշվում, թե ինչ բարիքներ ստացավ Շամին վերացնելուց հետո: Նա քարանձավից դուրս, մողեսագլխի զոհասեղանի դաշտի մոտ փոքրիկ քարանձավ էր գտել և հիմա ապրում էր այնտեղ: Երեք պատանիներ միշտ իր մոտն էին և կատարում էին բոլոր քմահաճույքները: Չէ մի-չէ՛, իր ցեղակիցների հոգսե՛րը պիտի հոգա: Այդ նրանք պետք է իրեն ծառայեն, այդ նրա՛նք պետք է ապահովեն իր կուշտ ու ուրախ կյանքը: Եթե ուզում են տեսնել իրեն, թող խնդրեն: Ինչքան քիչ ես երևում այնքան խորհրդավոր ես դառնում ու մեծանում է հարգանքը: Կարևորը հազվագյուտ ծեսերի ժամանակ անկապ, նրանց համար անհասկանալի բառեր շաղ տալն է: Ինչքան քիչ հասկանան ասելիքդ՝ այնքան մեծ կլինի պատկառանքը: Այս պատանիներն էլ են կուրացել իմ անձով:



Կուրացե՞լ են, թե՞ հանգիստ ապրելու շահն է պահում նրանց ինձ մոտ: Չէ՞ որ նրանք էլ են օգտվում, ճիշտ է՝ քիչ, բայց օգտվում են ինձ տրվող պատիվներից: Բացի այդ, չեն չարչարվում, որսի հետևից չեն վազում: Ահա, կրկին եկան: Երևի նվերներ են բերել:

Մողեսագլխի գլխավոր պահապանն այս անգամ սխալվել էր: Դա իր երեք պատանիներն էին, որ վերադառնում էին ձկնորսությունից: Տայը անչափ կուզենար լսել, թե ինչ են խոսում օգնականները, սակայն նրանք շատ հեռու էին:

- Նա խաբեբա է,- պնդում էր բարձրահասակ Զոյը,- նա բոլորին իր պահանջմունքները կատարելու գործիք է դարձրել: Մի՞թե Շամը այդպես էր ապրում:

- Ճիշտ է,- հաստատեց նիհարիկ Վիյը,- մենք տեսանք, թե ինչպես նա կյանքը տվեց, որ լավ լինի մեզ համար:

- Երբ նորից սով էր սկսվել, այս մազոտ այծագլուխ Տայը իր թաքստոցներից չհանեց պաշարները: Այ թե Նայը կիմանա՜ր,- երրորդեց Քեյը:

- Իսկ հիշո՞ւմ եք՝ ո՜նց էր սողում Շամի ու Նայի առաջ, ոնց էր երդվում, որ իր ցեղակիցների համար կյանքն անգամ չի խնայի: Խաբեությամբ սպանել տվեց, ավելի ճիշտ՝ իր ձեռքով սպանեց Շամին, իսկ հիմա չարիք է դարձել բոլորի գլխին:

* * *

Զով քամին մեղմորեն շոյում էր բարձր ժայռի կատարին կանգնած Տայի երկար մազերը: Քնելուց առաջ նա սովորություն ուներ կանգնել այստեղ և հիանալ մթության քողով պարուրվող շրջապատով: Գոհ էր, շատ գոհ: Դանդաղ կորչում էին Մա և Սի սարերի հիասքանչ գագաթները: «Այ, այպես պետք է ապրել»,- մտածում էր Տայը և ուզում էր գոռալ, որ սա է կյանքը:

Ետևից կամացուկ ոտնաձայն լսվեց: Ուզում էր շրջվել, բայց չհասցրեց: Մեջքին ստացած ուժգին հարվածից կորցրեց հավասարակշռությունը և արդեն մթության մեջ ընկղմված ձորը լցվեց նրա ոռնոցի ձայնով:

Վերևում կյանքը շարունակվում էր:

* * *

Գոյն իր Գիյի հետ շտապում էր դեպի Մաի զովացուցիչ լանջերը: Գարնան նորածիլ խոտի և նոր դուրս եկած ծաղիկների բույրը արբեցրել էին նրանց:

Հանկարծ երկնքից մի ահավոր ձայն լսվեց: Վերևից գետի նման թափվում էր վարար ջուրը, և դրա ալիքը նրանց սրընթաց ցած տարավ: Հետո, արդեն հեռվից, Գոյը տեսավ, որ Մա և Սի սարերի շուրջբոլորը ծածկվել է ջրով: Կրկին որոտի նմանվող ձայն լսվեց և երևաց կրակե մի գունդ, որն իջավ Մաի կատարին: Հետո ամեն ինչ լռեց: Սարին իջած տարօրինակ հրեկեղեցանու փորը բացվեց ու նրա միջից դուրս եկան սպիտակին տվող երեք մարդանման էակներ:

Գոյը ապշած նրանց էր նայում: Նրանք արագ իջնում էին սարի լանջով: Հետաքրքրասիրությունը հաղթեց վախին:

- Գիյ, արի ինձ մոտ,- շշնջաց Գոյը,- ապա շոյեց մոտեցած գազանի վիզը և ասաց, - ինձ մենակ մի թող, արի մոտենանք ու տեսնենք, թե ինչ գազաններ են:

Երեք սպիտակին տվող էակները և Գոյն ու Գիյը քայլում էին դեմ-հանդիման: Գոյն ասես կախարդված լիներ: Երբ մոտեցան, Գոյը սարսափով տեսավ, որ նրանցից մեկը ձեռքը տարավ վերև և հանեց փայփլուն կլոր գլուխը, բայց այնտեղ մնաց շիկավուն մազերով և կարճ կտրած մորուքով ևս մի գլուխ: Շիկավուն գլուխը ժպտաց և իրեն անհասկանալի ինչ-որ խոսքեր ասաց: Մի փոքր ուշքի եկած Գոյը բացասական շարժեց գլուխը: Նա ուշադիր լսում էր ժպտացող գլխի արտասանած հանգիստ բառերը և նրանց մեջ նկատեց Նոյ, Նոյ բառի կրկնությունը:

- Նո՞յ,- վերջապես համարձակվեց հարցնել պատանին:

- Նո՛յ,- հաստատեց ժպտացող շիկավուն գլուխը և ուղղեց թևի տակ գտնվող անքիթ ու անբերան փայլփլող գլուխը:

* * *

Առաջնորդ Նոյը՝ Գոյի միջնորդությամբ, որն արդեն որոշակի հասկանում էր եկվորների լեզուն, զրուցում էր առաջնորդ Նայի հետ: Նրանց գալուստից անցել էր գրեթե մեկ տարի: Նոյն, իհարկե, սովորել էր նրանց լեզուն և գերագույն հաճույք էր ստանում այս վայրենանման ապրող մարդկանց հետ շփումներից, Գոյի նման խելացի պատանու ներկայությունից: Նա հիացավ, երբ իմացավ, թե ինչպես է տղան կրակն օգտագործելու հայտնագործությունն արել: Կրակ,

որի շնորհիվ և Նոյի ու նրա ընկերների օժանդակությամբ մեկ տարվա մեջ լիովին փոխվել է այս մարդկանց կյանքը: Նոյը նախ կարողացավ հաշտեցնել Մա և Սի սարերի շուրջն ապրող բոլոր ցեղերին, սովորեցրեց հող մշակել, սուր և նիզակ սարքել, չնայած իրենք տեղաբնակներին սարսափ ներշնչող այլ զենքեր ունեին: Որոշեցին, որ վաղ է դրանք վստահելը դեռ բավականին ցածր մակարդակի վրա գտնվող ցեղախմբերին, քանի որ ոչ բարի նպատակներով օգտագործելու դեպքում մեծ չարիքներ կբերեն նրանց: Տեղաբնակներն առավել ապշել էին, երբ նրանց սովորեցրին օգտագործել վայրի գիերին, և կատաղի գայլարջն էլ դարձավ իրենց հլու օգնականը: Իսկ իրենք միշտ վախով էին հետևել Գոյի և Գիյի մտերմությանը և կարծում էին, թե այդ տղան ինչ-որ կախարդական հատկություններ ունի, որ Գիյը հնազանդվում է նրան:

- Հարգարժան Նայ, հարկավոր է օգնել մարդկանց, առավել ճիշտը առանձին ընտանիքներ կազմելն է: Հայը և Աստան լավ օրինակ են տվել,- բացատրում էր Նոյը: Մի բռնանա, եթե ուզում են, թող զույգերով հեռանան քեզանից: Ապրելու տեղ շատ կա, թող իրենց համար հարմար տեղեր գտնեն ու բազմանան: Քեզ հետ մնացողները նույնպես թող զույգեր կազմեն, բայց ապրեք իրար մոտ, որպեսզի կարողանաք անհրաժեշտության դեպքում օգնել միմյանց...

* * *

Հայը և Աստան հրաժեշտ տվեցին բոլորին և իրենց զավակների հետ իջան Մա և Սի սարի առաջ փռված դաշտավայրը: Նրանց հետևեցին այլ զույգեր, որոնք ավելի և ավելի հեռու էին գնում: Աշխարհն ընդարձակ էր և այն բնակեցվում էր մարդկանցով:

Գոյը հրաժարվեց գնալ ծնողների հետ:

- Ես պետք է մնամ Նոյի կողքին,- պնդեց նա,- ես ուզում եմ, և դեռ կարող եմ շատ բան սովորել նրանից:

* * *

Նոյը չէր ցանկանում իր հետ վերցնել տղային, չնայած բավականին կապվել էր հետը: Գոյին առաջին պահին խիստ վախեցրած տիեզերանավն արդեն կարողացել էին կարգի բերել, և Նոյն ու իր ուղեկիցները պատրաստվում էին վերադառնալ:

Եկավ հրաժեշտ տալու պահը: Շիկահեր Նոյը կրկին դիմեց իր



շուրջը հավաքված մարդկանց.

- Ապրեք հաշտությամբ ու խաղաղության մեջ, բազմացեք և շենացրեք ձեր երկիրը: Մնաք բարով:

Նա առանձին ողջագուրվեց Նայի հետ, ապա նշան արեց տիեզերանավորդի սպիտակ հագուստ հագած և ձեռքին կլոր սկաֆանդր բռնած Գոյին: Նրանք դանդաղ մոտեցան տիեզերանավին, որի բացված դռնից ներս մտնելուց առաջ Գոյը շուռ եկավ.

- Ես դեռ կվերադառնամ,- գոչեց նա և Նոյի հետևից մտավ ներս:

Տիեզերանավն ահռելի աղմուկով երկինք սլացավ:

ԳՈՅԸ ԿՎԵՐԱԴԱՌՆԱ

Լայնաթիկունք, բարձրահասակ, գանգրահեր, կապտաչյա Ատոմն առաջնորդում էր Արքայից արքա Տիգրան Մեծի հայկական բանակի առաջապահ ջոկատը: Հռոմեացիները արշավում էին Հայոց հզոր արքայի դեմ, որը հյուրընկալել էր իրենց ոխերիմ թշնամի Միհրդատին՝ Պոնտոսի թագավորին: Իրադրությունը ծանր էր: Հայոց արքան չէր կարող մերժել իր աներոջն ու դաշնակցին՝ Միհրդատին, որը, հռոմեացիներից հերթական պարտությունը կրելուց հետո, ապաստարան էր գտել Հայաստանում: Արդյունքում. երկիրն ստիպված էր դիմակայել հզորագույն հռոմեական կայսրության արշավանքին:

Ատոմի՝ ասես պարող սևաբաշ նժույգը ծառս եղավ ու, ականջները սրած, կանգնեց: Զորավարը ձեռքով նշան արեց իր զինակիցներին. հավատարիմ նժույգը օտարների հոտ էր առել:

Ատոմը մոտ կանչեց իր թիկնապահներից երկուսին, իսկ մյուսներին կարգադրեց սպասել տեղում, ապա արագացրած վարգով առաջ մղեց ձին:

Նրանք անցան ձորակը և, բարձրանալով դիմացի լեռան գագաթը, ներքևում տեսան հռոմեական լեգեոներների վրանները: Ատոմը ուշադիր զննում էր իր դիմաց պարզորեն երևացող զինվորական ճամբարը, որի շրջակայքում նկատելի էին հերթապահող նիզակակիր զինվորները: Զգացվում էր, որ հռոմեական ճամբարում հանդարտություն է տիրում: Եվ դա բնական էր. չէ՞ որ Տիգրանի զորքը, ըստ նրանց, պետք է գտնվեր հեռավոր Այրարատյան գավառում:

- Արտաշես,- կամաց ձայնեց Ատոմը՝ իր թիկնապահներից մեկին, որն իսկույն մոտեցավ,- կարծում եմ, սա հռոմեական զորքի առաջապահն է, որը բավականին կտրվել է հիմնական բանակից: Նրանք հանգիստ են, քանի որ ենթադրում են, թե մենք դեռ հեռու ենք իրենցից: Ես այստեղ կսպասեմ և կուսումնասիրեմ ճամբարը, իսկ դու շրջանցիր աջ կողմի լեռը և տես. իրո՞ք այս ջոկատը կտրված է հիմնական ուժերից, թե՝ ոչ: Մինչև մթնելը հարկավոր է ճշտել դա, որպեսզի կարողանանք որոշում կայացնել:

Արտաշեսը շրջեց ձիու գլուխն ու քառատրոփ անհետացավ:

Ատոմը մոտ կանչեց մի փոքր հեռվում կանգնած Գոռին:

- Իսկույն ետ վերադարձիր և զգուշացրու մեր զորապետներին, որ զինվորներին կարգադրեն պատրաստվելու գիշերային մարտի, ապա նրանց բեր ինձ մոտ:

Գոռը ևս լուռ հեռացավ:

Ատոմն իր նժույգը մի փոքր ետ տարավ և, կապելով ծառից, վերադարձավ իր դիտակետը:

* * *

Երբ որոշվում էր կրկին արշավախումբ ուղարկել Երկիր մոլորակ, Նոյը պնդեց, թե այս անգամ բավական կլինի, որ Գոյը մենակ կատարի անհրաժեշտ ուսումնասիրությունները: Որոշեցին տիեզերանավը նորից իջեցնել արդեն ծանոթ Մա և Սի սարերի լանջին, որտեղ կմնային երկու ուղեկցող տիեզերանավորդներ, իսկ Գոյին հանձնարարվեց որոշ ժամանակ դառնալ տվյալ տարածքում բնակվող մարդկանցից մեկը... Տիեզերանավն իջավ, ինչպես հետագայում ճշտեցին՝ արդեն Մասիս կոչվող սքանչելի լեռան լանջին, որի շուրջը, պարզվեց, ստեղծվել էր Հայաստան անունով, Միջերկրական ծովից մինչև Պոնտական ու Կասպից ծովերը ձգվող մի հզոր պետություն: Հայկական հզոր արքա՝ Տիգրան Մեծը, հմտորեն կառավարում էր այդ մեծ պետությունը, որտեղ ստրկատիրական կարգեր էին տիրում: Որոշեցին, որ Գոյն ավելի ազատ կգործի, եթե հանդես գա զորավարի դերում, և կարճ ժամանակում նա դարձավ Տիգրանի վստահելի զորավարներից մեկը...

Գոյն իջնում էր Մասիսի հիասքանչ լանջերով ու մտովին վերադառնում հազարամյակներ առաջ այստեղ ընթացող կյանքին, հիշում իր անչափ սիրելի ու խելացի մորը՝ Հային, ուժեղ ու միշտ հավասարակշիռ հորը՝ Աստային: Նա բազմաթիվ մոլորակներում էր եղել,

տարբեր զարգացման մակարդակների հասած հասարակարգեր տեսել, բայց միշտ քնքշանքով ու կարոտով էր մտաբերել Երկիր մոլորակը, իր ծննդավայրը, որն այժմ կոչվում էր Հայաստան:

Գոյն ընդհանուր առմամբ գոհ էր այն առաջընթացից, որը նկատելի էր Մասիսի շուրջը բնակվող ժողովրդի կենցաղում: Մարդիկ վաղուց դուրս էին եկել քարանձավներից և բնակվում էին իրենց ձեռքով շինված օթևաններում, զարմանք էին պատճառում նրանց կառուցած բերդերն ու ամրոցները: Քաղաքները՝ Արտաշատն ու Տիգրանակերտը, բազմամարդ էին և ապրում էին աշխույժ կյանքով: Զարգացել էին արհեստներն ու, հատկապես՝ զինագործությունը, ընտելացվել էին բազմաթիվ կենդանիներ, որոնցից ձին դարձել էր թե՛ ռազմիկների, թե՛ գյուղի մշակների առաջին օգնականը: Մարտակառքերն ու նոր զենքերը վկայում էին մարդկային մտքի առաջընթացը: Սակայն Գոյին ճնշում էր այն միտքը, որ հիմնականում պատերազմներում, ապա նաև առևտրով հարստացած անձինք ստրկության են մատնել բազում մարդկանց: Պարզ է, որ Երկիր մոլորակում չէին կարող շրջանցել մարդկության զարգացման այդ փուլը ևս, բայց դա դուր չէր գալիս Գոյին:

Ինչո՞ւ պետք է միատեսակ աշխարհ եկած մարդիկ տարբեր հնարավորություններ ունենան: Մի՞թե մարդը մեղավոր էր, որ իրեն գերեվարել են կամ ծնվել է այդ գերեվարվածից...

Նրան մտքերից կտրեցին մոտեցող զորավարների ցածր ձայները:

* * *

Զինակիցները որոշ ժամանակ ուսումնասիրեցին հակառակորդին, ապա միաձայն համաձայնվեցին Ատոմի հետ. եթե Արտաշեսը հաստատի, որ հիմնական ուժերը հեռու են՝ կարելի է հարվածել այս ջոկատին: Ճիշտ է, նրանց թիվը գրեթե երկու անգամ մեծ է, սակայն հանկարծակի հարձակումը կարող է փոխել ուժերի հարաբերակցությունը:

Ատոմն Ափրիկին կարգադրեց իր ջոկատով անցնել այն մասը, որտեղից թշնամին որևէ վտանգ չի սպասում, իսկ մյուսներին հրամայեց պաստրաստվել հարձակման: Զորավարները քաջ գիտեին իրենց անելիքները և կարճ ժամանակում բոլորն էլ ճշտել էին գործողությունների ծրագիրը:

Ատոմը երկու մարդ թողեց դիտակետում, ապա զորավարների

հետ վերադարձավ զինվորների մոտ: Դեռ չեր մթնել, երբ սրարշավ եկավ Արտաշեսը. հռոմեական հիմնական ուժերը շատ հեռու են: Ուրեմն, կարելի էր սկսել մարտը:

* * *

Մթնշաղը դանդաղ գրկում էր դաշտը:

Հռոմեական ջոկատը լսեց հայկական զինվորների հուժկու մարտականչը: Սկսվեց կատաղի մարտը:

Առաջին հարվածից հետո մի փոքր ուշքի եկած հռոմեական զորավարը, կողմնորոշվելով իրադրությունում, իսկույն կարգադրեց.

- Հիմնական ուժերը կենտրոնացնել հյուսիսային ուղղության վրա: Նրանք քիչ են, իսկ մեր թիկունքն ապահով է. մեկ հարյուրյակը բավական կլինի այն պաշտպանելու համար: Կարգի բերել մարտաշարքերը և՝ ի մարտ:

Նա հեծավ իր ձին և անձամբ կռվի նետվեց:

Ատոմը նկատեց հռոմեական զորավարի գործողությունները և իր թիկնապահ ջոկատով գնաց նրան ընդառաջ:

Հռոմեական փորձված բանակի զինվորները ուշքի էին եկել առաջին գրոհից և, հետզհետե վերականգնելով մարտաշարքերը, իրենց քանակի ու հմտության շնորհիվ սկսեցին նեղել հայերին:

Մութն առավել խտացել և, գրկելով ինքնամոռաց կռվողներին, ասես անդունդն էր գլորում նրանց:

Երբ Ափրիկի փոքրաթիվ ռազմիկներն իրենց թարմ ու հուժկու ձայնով հնչեցրած ռազմակոչերով հարձակվեցին և ցրեցին հռոմեական հարյուրյակն ու մխրճվեցին հակառակորդի թիկունքը, մարտը վերածվեց կոտորածի...

Լուսաբացին հայերը տեղավորվել էին հռոմեական վրաններում:

Հաղթանակը կատարյալ էր:

* * *

Նա որոշեց որոշ ժամանակ էլ մնալ: Հայոց հզոր բանակը չդիմացավ համաշխարհային նկրտումներով տարված հզորացող Հռոմի ռազմերթին: Պոնտոսի խորամանկ Արքան՝ Միհրդատը, գլխովին ջախջախվեց, և նրա պետությունը անցավ պատմության գիրկը: Հայերը պարտվեցին, սակայն ինչ-որ հրաշքով շարունակում էին գո-

յատնել: Այժմ, դառնալով հզոր Հռոմի և Պարթևների կռվախնձորը, շարունակում էին դիմադրել ու ապրել, բայց ինչքա՞ն կարող էին դիմանալ: Անցան տարիներ...

* * *

Նա մնաց և հաստատվեց Վաղարշապատում, որտեղ գահակալում էր պարթևական ծագում ունեցող Հայոց Տրդատ թագավորը:

Քրիստոնեության գաղափարախոսությունը, սկիզբ առնելով Մերձավոր Արևելքում, զարմանահրաշ տարածում գտավ Հռոմեական կայսրությունում:

- Քրիստոսի առաքյալներ Մատթեոսն ու Բարդուղեմիոսն իրենց հավատքն են տարածում Հայոց աշխարհում,- պատմում էր քուրմ Տիրանը,- նրանք հրաշքներ են պատմում իրենց ուսուցչի՝ Աստծո զավակ Քրիստոսի մասին, որին հռոմեացիները խաչել են Երուսաղեմում, սակայն նա կրկին կենդանացել և երկինք է համբարձվել՝ իր 12 աշակերտներին պատգամելով տարածել նոր հավատքը: Պետրոս և Պողոս առաքյալները Հռոմ են գնացել...

- Տիրան,- ընդհատեց Ատոմը,- մի՞թե դու էլ ես հավատում, որ մեկ կամ երկու մարդիկ, որոնք նույնիսկ չգիտեն տվյալ երկրի լեզուն, կարող են գալ և այդպիսի հաջողությամբ տարածել իրենց ուսմունքը:

- Դժվար է հավատալ, բայց վկա է մեր ամենահաս և ամենազորեղ Արամազդը, որ նրանք իրոք գերում են մարդկանց հոգիները և դարձնում իրենց հավատակիցները:

- Ո՛չ, չես համոզի: Ես կարծում եմ, որ դրա պատճառներն ավելի խորն են և իրականում ոչ թե մեկ-երկու անձ են տեղափոխվում Մերձավոր Արևելք, այլ այդ հավատքին նվիրված մարդկային հոծ խմբեր, որոնք էլ, բնակություն հաստատելով այս կամ այն վայրում, սովորում են այդ բնակավայրի լեզուն, ուսումնասիրում բարքերը և ապա նոր հնարավորություն ստանում տարածելու իրենց ուսմունքը:

- Հավանաբար դու ճիշտ ես, Ատոմ,- համաձայնեց Տիրանը,- իսկապես, չէ՞ որ Հռիփսիմեի ու Գայանեի հետ Բյուզանդիայի կայսեր հետապնդումներից փախել և Հայաստանում հաստատվել էին բազում կույսեր: Բայց ժողովրդին ի՞նչն է ձգում դեպի այդ հավատը: Ինչո՞ւ են մարդիկ հրաժարվում մեր Արամազդից, Վահագնից ու Աստղիկից: Մի՞թե Հույս, Հավատ, և Սեր հասկացությունները խորթ են մեզ համար, իհա՛րկե, ո՛չ:

- Այստեղ կարևորը այդ հավատի պատվիրանները չեն, - փորձեց բացատրել Ատոմը,- փոխվում են աշխարհի կարգերը և բազմաստվածությունը այլևս հարմար չէ այդ կարգերին: Կենտրոնացվել է աշխարհիկ կառավարման ձևը, ուրեմն պետք է կենտրոնացվի նաև նրա հիմքերին սատարող գաղափարախոսությունը՝ հավատը: Ահա թե որտեղից է գալիս այս նոր հավատի՝ քրիստոնեության ուժը: Մեր Հայոց արքան՝ Տրդատը ևս հասկացավ այդ, ուստի փոխեց իր վերաբերմունքը պարթև Գրիգորի հանդեպ: Տե՛ս, նա հալածեց և կործանեց կույսերին, հալածեց Գրիգորին, սակայն աշխարհի տիրակալներից առաջինն ընդունեց քրիստոնեությունը՝ որպես պետական դավանանք:

- Տրամաբանորեն ճիշտ ես: Նշանակում է՝ եկե՞լ է մեր՝ քրմերիս վերջը: Պատրաստվենք նահատակությա՞ն:

- Ո՛չ, ո՛չ,- չհամաձայնեց Ատոմը,- ինչո՞ւ նահատակվել կամ ինչո՞ւ դիմադրել մի գաղափարախոսության, որը, միևնույն է, իր մեջ է առնելու բոլորին: Նրանք, ովքեր կդիմադրեն՝ կոչնչացվեն անխնա, իսկ ավելի խելացիները կընդունեն քրիստոնեությունը և կդառնան նրա քարոզիչները: Վերջիվերջո, գլխավորը մարդկային կյանքի հետագա զարգացումն է, որին նպաստում է այդ նոր դավանանքը: Խորհիր և կհամաձայնես, որ անիմաստ է պարտվող դավանանքի համար զոհել կյանքը, և ավելի խելացի կլինի՝ հասկանալ, ընդունել նորը ու շարունակել կյանքը:

- Ուրեմն՝ ի՞նչ: Ընդունեմ քրիստոնեական կրոնը և դառնամ նրա քարոզիչներից մե՞կը,- դժվարությամբ արտաբերեց քուրմը:

- Ամեն մարդ ինքն է ընտրում իր ուղին: Ես ասացի այն, ինչ ասացի,- անորոշ պատասխանեց Ատոմը:

* * *

Ժողովուրդը չէր հանդարտվում: Տաճարի քրմապետ Տիրանը հասկանում էր, որ նոր կրոնի տարածմանը լծված պարթև Գրիգորի մարտիկները կվերադառնան: Վերջիններիս փոքրաթիվ ջոկատը զինաթափվեց ժողովրդի կողմից: Նրանց ծեծելով վռնդեցին տաճարից:

-Սիրելի ժողովուրդ, - փորձում էր նրանց հանգստացնել Տիրանը, - մեր դիմադրությունն անիմաստ է: Մենք չենք կարող դիմադրել պետական ուժին: Եկեք լսենք նրանց: Դա կփրկի և՛ մեր կյանքը, և՛ թերևս, մեր աստվածների տաճարը...

- Ո՛չ, ո՛չ,- գոռում էր բորբոքված ամբոխը:- Մենք նրանց չենք տա

մեր նախնիների՝ դարերով պաշտած աստվածներին: Ո՛չ:

Հարձակվողների մեծաքանակ ջոկատն առաջնորդում էր Գրիգոր Պարթևը: Բոլոր դիմադրողներին անխնա կոտորեցին: Չէին խնայում կանանց և երեխաներին: Գազազած զինվորները հիմնահատակ ավերեցին հեթանոսական տաճարը:

- Ոչ մի քար չպետք է մնա այս անօրեն տաճարից,- աներեր հրամայում էր Գրիգորը:

- Գրիգոր Պարթև, ի՞նչ եք անում,- խոսեց նրա կողքին գլխահակ կանգնած Տիրանը:

- Միայն այսպես: Կամ պետք է մկրտվեն ու անցնեն նոր, լուսավորյալ կրոնին, կամ՝ կոտորվեն,- պատասխանեց մի փոքր հանդարտված Գրիգորը,- այլ ճանապարհ չկա: Եթե ուզում ենք պահպանել Հայաստանը և հայ ազգը, պետք է անցնենք այս ճանապարհով: Բարձրյալը արժանվույնս կգնահատի մեր ժողովրդի նվիրվածությունը: Սա է նոր ճանապարհը, որը տանում է դեպի ապագան:

- Մի՞թե նորը հաստատելու համար անհրաժեշտ է քանդել ու ավերել հինը,- չէր համաձայնում Տիրանը,- արդյո՞ք ավերով ու արյունով ներդրվածը՝ թեկուզ և ավելի կատարյալ ու անհրաժեշտ նորը, կարող է կենսունակ լինել:

- Կարող է,- վստահ պատասխանեց Գրիգորը: Ցավալի է, իհա՛րկե, շատ ցավալի է, որ մարդիկ ուսյալ չեն և չեն հասկանում նորին անցնելու անհրաժեշտությունը: Տես, Տրդատ թագավորը հասկացավ և ճիշտ վարվեց: Իսկ ժողովուրդը... Եթե այլ ելք չկա, ուժով պետք է հավատքի բերել նրանց: Նորի մուտքը զոհեր է պահանջում: Որոշ ժամանակ անց ժողովուրդն ինքը կհրաժարվի ու կմոռանա իր հին աստվածներին:

Նրանց կողքին մինչ այդ լուռ կանգնած Ատոմը հանկարծ միջամտեց.

- Ժամանակն իրոք ամոքում է շատ վերքեր: Բայց ժողովրդի մեջ դարերով ամրապնդված հավատն այդպես հեշտությամբ չի զիջի իր դիրքերը: Դաժանությամբ, սպանությամբ և ավերով մտցված նորը կարող է նույնպիսի պատասխան ստանալ: Դրա վկայությունը մեր աչքի առաջ է: Հավանաբար ճիշտ չի դրված կրոնի տարածման հիմքը:

- Սխալներն անխուսափելի են ամեն մի նորը ներմուծելիս,- կարծես համաձայնեց Գրիգորը,- կարող է նույնիսկ որոշ չափազանցությունների մեջ ենք ընկնում, սակայն ուղին ճիշտ է ընտրված և միակն է:

- Դրանք սխալներ չեն,- առարկեց Տիրանը,- սխալն այն է, որ

հնարավոր է ուղղել: Սա սխալ չէ. սպանված մարդկանց մենք չենք կարող ետ բերել:

- Տիրան, դո՞ւ էլ ես այդ կարծիքին,- զարմացավ Գրիգորը,- բայց չէ՞ որ դու հասկացար նորի անհրաժեշտությունը և ընդունեցիր այն:

- Ես անհատ եմ և իմ ուսյալ լինելն օգնում է հասկանալ կատարվող փոփոխությունների անհրաժեշտությունը, իսկ նրանց հարկ է բացատրել ու համոզել:

- Այո, Տիրանն իրավացի է,- կրկին միջամտեց Ատոմը,- հարկ է բացատրել ու համոզել:

- Դրա ժամանակը, ցավոք, չունենք, բայց տրամաբանությունը ճիշտ է,- անսպասելիորեն համաձայնվեց Գրիգորը,- Տիրան, մենք և մեզ միացած ուսյալ հոգևորականները կլծվեն մեր ժողովրդին լուսավորելու գործին: Պետք կգան շատ դպրոցներ և շատ ուսուցիչներ: Մենք կանցնենք այդ լուսավոր ուղին: Մենք ժողովրդին մեր կողմը կբերենք՝ պահպանելով ավանդական, նրանց համար սովորական դարձած ծեսերը: Խորհելու տեղ ունենք: Տիրան, դու հրաշալի գիտես հայ ժողովրդի պատմական սովորույթները: Մտածիր և առաջարկիր, թե ինչպես կարող ենք դրանք ներդնել Նոր կրոնի ծիսակարգերի մեջ: Բավական է արյուն հեղելը: Հայ ժողովուրդը կհասկանա և կգնահատի մեր արարքները: Քրիստոնեությունն է մեր ապագան: Լույսը, Հավատը և Սերը կիշխեն աշխարհում,- ասես, կտրված իրականությունից, եզրափակեց Գրիգոր Լուսավորիչը...

* * *

Մեսրոպ վարդապետը կրկին դիմեց իր աշակերտներին:

- Մենք պարտավոր ենք գտնել մեր, հայկական գրերը, մենք առաքված ենք փրկելու մեր ազգը այլ ժողովուրդների հետ ձուլվելուց, մեր անքուն գիշերները զուր չեն անցնելու,- սկսեց նա, ապա դարձավ Կորյուն աշակերտին:- Այժմ ես գնում եմ աղոթելու, դու կգաս ինձ հետ: Աստված մեծահոգի է ու բարի, նա կտա այս խնդրի բանալին: Գնանք որդյակս, գնանք և խնդրենք Բարձրյալին՝ ողորմա՛ մեզ: Դուք կմնաք այստեղ և ձեր աղոթքը կմիացնեք մերին:

Ատոմը Մեսրոպի աշակերտների մեջ էր: Նա ուղեկցել էր ուսուցչին իր դեգերումներում և այժմ սպասում էր հրաշքին: Նա համոզված էր, որ հայկական գրերի ստեղծման գաղափարը անհրաժեշտություն է ողջ ազգի համար: Այդ բանը հասկացավ նաև դրանով ապ-

ռող Մեսրոպ վարդապետը, որը պետք է հոգեբանորեն պայծառատես դառնար, պետք է հաղթահարեր այդ անլուծելի թվացող խնդիրը: Իր վերադարձին կարճ ժամանակ էր մնացել, և նա անչափ ցանկանում էր դառնալ մարդկային այդ գյուտի վկան: Միջամտելու իրավունք չուներ, ուստի հույսով և հավատով ձգտում էր ներկա լինել այդ մեծագույն արարչագործությանը:

Ատոմի շուրջն աղոթող աշակերտներից մեկը՝ Մովսեսը, հանկարծ հրեց նրան ու շշնջաց.

- Նայի՛ր, նայի՛ր, թե ի՞նչ է կատարվում:

Աշակերտների աչքի առաջ մթնած երկնքից մի պայծառ շող իջավ այնտեղ, որտեղ աղոթում էին Մեսրոպ վարդապետն ու Կորյունը, ապա բոլորը լսեցին ուսուցչի ձայնը.

- Փառքդ շատ, ով Տեր: Ես տեսնում եմ նրանց, հայոց անմահ զինվորներին: Փառքդ մեծ, ով Տեր: Դու պարգևեցիր ինձ այդ մեծ հրաշքը և իմ համեստ ջանքերը զուր չթողեցիր, Այբ, Բեմ, Գիմ, Դա... , - լսվում էր Մեսրոպի խրոխտ ձայնը:

* * *

Վաղարշապատը ցնծության մեջ էր: Հայոց թագավոր Վռամշապուհը և Սահակ Կաթողիկոսը դիմավորում էին Մեսրոպ Մաշտոցին ու նրա աշակերտներին: Հայ ազգը մի նոր ամուր հենարան էր ձեռք բերել իր հարատևության համար: Եկեղեցու ուրախ զանգերի ղողանջով լցվել էր Վաղարշապատը: Հայ ժողովուրդը դիմավորում էր «զորավար» Մեսրոպին իր զինվորների՝ հայոց անմահ տառերի հետ, որոնք ազգը պաշտպանելու էին հետագա բոլոր ոտնձգություններից...

* * *

Ատոմ իշխանը մենակ էր վրանում: Նա նոր էր վերադարձել Վարդան սպարապետի մոտից: Բոլորի համար ակնհայտ էր, որ 60 հազարանոց հայկական զորքը չի կարող դիմակայել պարսիկների 200 հազարանոց, Հնդկաստանից բերած փղերով ուժեղացված բանակին: 451թ. մայիսյան երեկոն վերջինն էր լինելու մարտի պատրաստվող իշխանների, զինվորների և աշխարհազորային շինականների համար:- Իմացյալ մահն անմահություն է,- իր խոսքը եզրափակեց Վարդան Մամիկոնյանը, և բոլորը լռելյայն համաձայնեցին նրա հետ: Վաղը Սպարապետը կասի իր խոսքը հանուն հավատքի պայքարի պատրաստ հայերին: Վաղը նրանցից շատերը կնահատկվեն քրիստոնեության դրոշի տակ: Կնահատակվի նաև Վարդանը:

Ատոմ իշխանը կտրուկ շարժումով վեր կացավ և սկսեց ետ ու առաջ քայլել վրանում: Արդյո՞ք Վարդան սպարապետի շուրջը հավաքված հայերը ճիշտ որոշում կկայացնեն: Չէ՞ որ Վասակ մարզպետը այլ ուղի էր առաջարկում. ընդունել պարսից կրոնը և դրանով իսկ խուսափել կոտորածներից: Վերջինս համոզված էր, թե դա կփրկի հայ ժողովրդին: Բայց, ո՛չ, Վարդանն ու նրա համախոհները չհամաձայնեցին: Նրանք համոզված էին, որ, պարսիկներին զիջելով կրոնական հարցերում, կկորցնեն ազգը: Կրակապաշտությունը ոչ միայն կրոնական զիջում կլինի, այլև պատմական ու հոգևոր ետդարձ, այսինքն ձուլում և կործանում: Հայերը դեռևս 301-ին են կատարել իրենց ընտրությունը՝ պետականորեն ընդունել քրիստոնեությունը, հետո՝ Քաղքեդոնյան կրոնական ժողովում գտել իրենց գոյատևման բանալին, առանձնանալով որպես յուրատեսակ և միակ քրիստոնեական ուղղություն՝ հայ գրիգորյան-առաքելական եկեղեցի, ինչն ազգին զերծ է պահում բյուզանդացիների հետ ձուլումից: Կատարվել է մեծ հրաշքը, Սուրբ Մեսրոպն ստեղծել է հայ ազգի հարատևման հիմնաքար դարձած հայոց այբուբենը: Եվ այժմ Վասակն առաջարկում է կռապաշտություն ընդունել, որը ազգի կործանման սկիզբը կդառնա: Ո՞վ է ճիշտ. Վարդա՞նը, թե՝ Վասակը: Պատմությունը ցույց կտա: Իսկ վաղը, վաղը Ավարայրի այս լայնարձակ դաշտում կընկնեն հայոց հավատքի նվիրյալները, որոնք, գիտակցաբար մահ ընդունելով, բարձր կպահեն հայ ազգի գոյատևման հնարավորության ջահը:

* * *

Ատոմ իշխանը արյան մեջ կորած, կռվում էր: Նա տեսավ, թե ինչպես բազմաթիվ նետերով խոցված ընկավ Վարդան սպարապետը: Ընկավ՝ հարատևելու հայ պատմության մեջ՝ որպես ազգի և հավատքի սուրբ նվիրյալ:

Իր ուղղորդողին կորցրած վիրավոր փիղը, խելագարված ահարկու աղմուկից, շարժվում էր Ատոմ իշխանի կողմը: Նրա կողքին մնացել էին ընդամենը երեք թիկնապահները, որոնք հոգնածությունից ու ստացած վերքերից հազիվ էին կանգնում ոտքերի վրա:

- Ի մարտ,- գոչեց Ատոմը,- և իր թիկնապահների հետ շարժվեց գինուց և մարտից հարբած փղի կողմը,- հայ ազգը հարատևելու է,

քանի դեռ ունի Վարդան սպարապետի և նրա զինակիցների նման որդիներ, ի մարտ,- վերջին անգամ ձայնեց Ատոմը և ինքն էլ մխրճվեց անհունի գիրկը...

* * *

Ամռան արևը գրեթե հալեցրել էր Մեծ Մասիսի գագաթի ձյունը:

Գոյը՝ նույն ինքը Ատոմը, կանգնել էր տիեզերանավի բաց դռան առաջ և անթարթ նայում էր ներքևում փռված հարազատ երկրին, ապա բարձրացրեց ձեռքը և հրաժեշտի ողջույն հղելով՝ դանդաղ մտավ իրեն սպասող տիեզերանավը, համոզված, որ դեռ վերադառնալու է և դառնալու վկան մարդկային մտքի նորանոր հրաշքների:

Արարատյան երկիրը թևակոխում էր նոր հազարամյակ...

Պատմվածքներ

ԺՊԻՏԸ

Ժպիտը շարունակում էր իր անվերջանալի ուղին, համոզված, որ կյանքն առանց իրեն կդառնա տխուր ու իմաստազուրկ: Ամեն անգամ բաժանվելով իր որոշակի մասնիկից՝ զարմանում էր, թե ինչպե՞ս ինքը չի վերջանում: Բայց ինչպե՞ս կարող է վերջանալ ժպիտը, նույն ինքը՝ բարությունը, սերը, իսկական ընկերությունը: Ուրեմն՝ հառաջ, բաժանելու ժպիտի մասնիկներն աշխարհին...

* * *

Փոքրիկ աղջիկը հոնգուր-հոնգուր լաց էր լինում:

Երբեմն-երբեմն, մաքրելով աչքերից առատորեն հորդող արցունքները, նա փոքրիկ բռուցքն ուղղում էր բակում ուրախ խաղացող աղջիկների կողմը և ինչ-որ բան ասում նրանց հասցեին:

Ժպիտը սահուն սլացքով մոտեցավ նրան.

- Ինչո՞ւ ես այդպես հուսահատորեն լալիս, աղջիկս,- մեղմորեն հարցրեց նա:

- Նրանք խլեցին իմ սիրելի տիկնիկը: Դա իմ տիկնիկն է:

-Մի՞թե դու չես կարող խաղալ այլ տիկնիկով կամ խաղալիքով,- զարմացավ ժպիտը:

- Ոչ, չեմ կարող,- ես պետք է խաղամ իմ սիրելի տիկնիկով: Նրանք վատն են: Նրանք խլեցին իմ տիկնիկը,- կրկին բարձրաձայն լացեց աղջիկը,- ես, միայն ես պետք է խաղամ այդ տիկնիկով:

- Այդպես չի լինում,- առարկեց ժպիտը,- իհարկե, աշխարհում կան անփոխարինելի բաներ, ծնողներ, քույրեր և եղբայրներ: Բայց ի՞նչ է տիկնիկը. անշունչ մի իր, որը սիրելի է քեզ համար, սակայն, ինչո՞ւ նրանով չխաղան նաև քո ընկերուհիները: Չ՞է որ վերջում այն քեզ մոտ է մնալու:

- Ո՛չ, և ո՛չ,- գոչեց չարացած աղջիկը,- դա իմն է, և միայն ես պետք է խաղամ իմ տիկնիկով:

- Իսկ դու փորձե՞լ ես ետ վերցնել քո տիկնիկը,- հետաքրքրվեց ժպիտը:

- Այո, երբ նրանք ինձնից խնդրեցին տիկնիկը, ես մերժեցի: Հետո կռվեցինք ու ես քաշում էի նրանց մազերից, նույնիսկ կծեցի նրանցից մեկի ձեռքը, բայց դա չօգնեց: Նրանք ինձ չար ու նախանձ անվանեցին ու տարան իմ տիկնիկը:

- Դու չա՞ր ես ու նախա՞նձ,- հետաքրքրվեց Ժպիտը:

- Ոչ, ես չար չեմ, ես նախանձ չեմ, - ըմբոստացավ աղջիկը:- Բայց առաջ այդպես չէր: Առաջ բոլորը խաղում էին ինձ հետ, տալիս էին իրենց խաղալիքները և վերցնում իմը: Ինչո՞ւ են հիմա ինձ չար անվանում:

- Հիշիր, գուցե դու ինչ-որ բան ե՞ս կորցրել,- հանկարծ գլխի ընկավ Ժպիտը:

- Ի՞նչ... Կորցրե՞լ... - կարկամեց աղջիկը, ապա, որոշ դադարից հետո շարունակեց:- Այդ օրը ես վատ, շատ վատ երազ տեսա: Երբ արթնացա նայեցի հայելուն ինձ թվաց, որ ինչ-որ բան եմ կորցրել: Ուշադիր նայեցի, բայց ոչ մի փոփոխություն չտեսա. նույն երեսն էր, նույն աչքերը, նույն քիթն ու բերանը:

- Հետաքրիր է, անչափ հետաքրքիր,- ասաց Ժպիտն ու ավելի մոտենալով աղջկան շշնջաց,- հապա ինձ նայիր, փոքրիկս:

Ժպիտը ուշադիր զննում էր աղջկա դեմքը: Իրոք, սովորական դեմք է, գեղեցիկ, սևուկ, բայց տխուր աչիկներով, կարմիր թշիկներով, որոնց վրա դեռ փայլում են արցունքի թողած հետքերը: Շրթունքները նույնպես գեղեցիկ են, սակայն, չգիտես ինչու, չափից ավելի սեղմված իրար...

- Դու գեղեցիկ աղջիկ ես,- ասաց նա,- իրոք, կարծես, ամեն ինչ իր տեղում է:

- Այ, տեսնում եք,- պատասխանեց աղջիկը՝ կրկին կիտելով հոնքերը, - իսկ նրանք ինձ չար ու անհոգի են անվանում ու խլում իմ սիրելի տիկնիկը: Այդ իրենք են չարն ու անհոգին,- կոպտորեն նետեց նա:

- Սպասիր, աղջիկս, ես գիտեմ, թե այն օրը դու ինչ ես կորցրել: Ես քեզ կօգնեմ: Բայց մեկ պայման ունեմ: Դու միշտ պետք է հիշես, որ այն, ինչ ես հիմա կվերադարձնեմ քեզ, միշտ, նույնիսկ՝ կյանքիդ ամենածանր պահերին, դու պետք է պահպանես և երբեք չկորցնես: Այն կարող է որոշ ժամանակ մտնել հոգուդ խորքերը, բայց դու չպիտի թույլ տաս, որ այն երբևիցե կրկին լքի քեզ, ապա թե ոչ՝ կյանքդ կդառնա անվերջ տխրությունների և անհաջողությունների շարան: Դու ոչ միայն պետք է պահպանես այն, այլև քո տարիքի հետ՝ այն պետք է աճի ու մեծանա: Ահա, վերցրու քո կորցրած անգնահատելի

գանձը, առանց որի դատապարտված կլինես անհաջողությունների: Դուք միասին կհաղթահարեք կյանքի բոլոր դժվարությունները: Վերցրու և գնա ընկերուհիներիդ մոտ,- ավարտեց Ժպիտը և իրենից մի փոքրիկ մասնիկ մեղմորեն փչեց աղջկա դեմքին:

Աղջիկը զարմացած նրան էր նայում, ապա, հանկարծ մեղմորեն ժպտաց, ձեռքով ողջույնի նշան արեց Ժպիտին ու վազեց իր ընկերուհիների կողմը:

Ժպիտը վերևից տեսավ, թե ինչպես աղջկա ընկերուհիները, սկզբում չկամությամբ, ապա զարմանքով և ուրախությամբ ընդունեցին իրենց ընկերուհուն: Որոշ ժամանակ անց սիրելի տիկնիկը աղջկա ձեռքում էր: Աղջիկը ուրախացած գրկում էր իր տիկնիկը, մի փոքր խաղալուց հետո փոխանցում ընկերուհիներից որևէ մեկին, հետո կրկին ետ ստանում: Օրը մթնում էր: Աղջիկը զվարթ հրաժեշտ տվեց ընկերուհիներին և ուրախ Ժպիտը դեմքին՝ սիրելի տիկնիկը գրկած, գնաց տուն:

Ժպիտը զգաց, որ իր մեջ ինչ-որ բան հաճելիորեն խլրտաց. «Ես վերադարձրեցի նրա բաժին Ժպիտը,- մտածեց նա,- ժամանակն է շարունակելու ճանապարհը, ես այստեղ այլևս անելիք չունեմ»:

Առջևում նրան սպասում էր երկար, անվերջ ճանապարհ...

ԱՂՋԻԿՆ ՈՒ ԿԱԿՏՈՒՍԸ

Փոքրիկ աղջիկը շատ էր սիրում իրենց պարտեզը: Գարնան առաջին ջերմության հետ կանաչում էր այն, ապա, մեկը մյուսի հետևից սկսում էին բացվել ծաղիկների կոկոնները ու պարտեզը լցվում էր բազմագույն ու բազմաբույր գեղեցկուհիներով: Նա նստում էր պարտեզի իր սիրելի անկյունում գտնվող նստարանին, հաճույքով նայում բնության հրաշք ծաղիկներին, որոնց անուշ բույրը հաճելիորեն շոյում էր նրա փոքրիկ քթիկը, ապա ներս մտնելով՝ պարուրում անուշահոտ թրթիռով:

Նա ամպի չափ սիրում էր իր տատիկին: Երբ վերջինս ընկերանում էր իրեն, նստում պարտեզի հիասքանչ ամկյունում, զարմանքով լսում էր ծաղիկների ու բույսերի կախարդական աշխարհի գաղտնիքների մասին պատմությունները: Պարզվում էր, որ աշխարհում ոչ մի բույս աննպատակ չի ծնվում ու չի կորչում:

Երբ տատիկը տնկում էր այդ փշոտ ու անբարետես կակտուսը, աղջիկը տրտնջաց.

- Տատիկ, ինչո՞ւ ես այդ տգեղ ու փշոտ կակտուսը տնկում իմ սիրելի ու գեղեցիկ ծաղիկների մոտ:

- Թոռնիկս,- ժպտաց տատիկը,- մի խաբվիր արտաքին տեսքից: Կակտուսն էլ բնության պարգևներից է ու իրավունք ունի գտնվելու քո սիրելի ծաղիկների կողքին: Մոռանո՞ւմ ես, վարդն էլ փշեր ունի, բայց ինչ գեղեցիկ ծաղիկ է ու որքան օգտակար:

Աղջիկը չսիրեց կակտուսին: Նա զգում էր, որ իր սիրելի ծաղիկներն էլ չկամությամբ ընդունեցին անկոչ հյուրին: Նա նայում էր իր գեղեցկուհիներին ու, ասես լսում նրանց դժգոհությունը:

- Ինչո՞ւ բերեցիք այս անճոռնի բույսը և դրեցիք մեր կողքը,- բողոքում էին վարդերը:

- Տես, սուր ու անպիտան փշերից բացի ոչինչ չունի,- շշնջում էին կակաչները:

- Գոնե ծաղիկ ունենար, որ չփչացներ մեր բարետես շրջապատը,- ընդվզում էին մեխակները:

Չգիտես՝ ո՞ր արևադարձային երկրից բերված կակտուսը նեղացած անբարեհամբույր ընդունելությունից՝ համառորեն լռում էր, ավելի ցուցադրելով իր սուր փշերը:

Չմռան վերջին աղջիկը ծանր հիվանդացավ: Հաճախակի այցելող, անընդհատ նոր դեղեր նշանակող բժիշկները անզոր էին: Աղջիկը նիհարել, հալչող մոմ էր հիշեցնում: Տատիկը աղոթում ու բժիշկներից թաքուն փորձում էր իր իմացած միջոցներով օգնել օրեցօր մարող թոռնիկին: Ոչինչ չէր օգնում: Նա թևաթափ նստել էր թոռնիկի մահճակալի մոտ, երբ վերջինս թույլ ժպիտը դեմքին դիմեց իր տխուր-տխուր տատիկին.

- Տատիկ, արդեն գարուն է, շուտով կրկին կբացվեն մեր ծաղիկները, մենք կնստենք մեր պարտեզի անկյունում ու ես կլավանամ:

- Այո, սիրելիս, եկել է գարունը և դու անպայման կապաքինվես,- հուսադրեց տատիկը զսպելով աչքերից դուրս սողացող արցունքների հոսքը:

- Տատիկ, հանկարծ հիշեց թոռնիկը,- ինչպե՞ս է իրեն զգում մեր կակտուսը: Տեսնես, հաշտվե՞ց մյուս ծաղիկների հետ:

- Ի՞նչ,- զարմացավ տատիկը,- նրանք գժտվե՞լ էին:

- Այո, տատիկ,- հաստատեց թոռնիկը,- նրանք բողոքում էին և խնդրում, որ այդ անճոռնի, փշոտ ու անօգտակար կակտուսին հեռացնեմ իրենցից: Գիտես, կակտուսը չէր խոսում իմ ծաղիկների հետ: Երևի չարն է ու գոռոզ:

- Ոչ սիրելիս, նա չար չի կարող լինել, եթե այդպիսին նրան չդարձնի շրջապատի անտարբեր, անհոգի վերաբերմունքը: Նա երևի նեղացել է անհյուրընկալ վերաբերմունքից ու որոշել չխոսել իրենց գեղեցկությունից արբեցած ու քո առանձնակի հոգատարությունից մեծամտացած գույնզգույն թիթիզներից:

- Իսկ նա ինչպե՞ս անցկացրեց ձմեռը,- հետաքրքրվեց աղջիկը,- այսօր կհանեմ նրա տաք շորերը: Չէ որ գարուն է արդեն:

- Տատիկ, մոտեցրու պատուհանին,- խնդրեց թոռնիկը,- ես ուզում եմ տեսնել մեր պարտեզը:

Տատիկը աղջկան գրկեց, նստեցրեց պատուհանի մոտ դրված բազկաթոռին, ապա դուրս եկավ ու նայելով իրեն ժպտացող թոռնիկին՝ մոտեցավ շորերով փաթաթված կակտուսին: Մի կողմ տարավ շորերը ու տեսավ զգալիորեն մեծացած բույսին: Կրկին դեմքը շրջեց դեպի պատուհանը՝ հույսով ու հետաքրքրությամբ նայող աղջնակին: Հանկարծ շանթահարվածի նման շրջվեց կակտուսի կողմը, կռացավ ու արյունոտելով ձեռքերը մի քանի շյուղ պոկեց նրանից:

- Տատիկ ջան, դառն է, չեմ կարողանում խմել,- բողոքում էր թոռնիկը,- տգեղ կակտուսից դառը ջուր է ստացվել, չեմ ուզում,- ընդդիմանում էր նա:

- Խմիր,- խնդրում և պնդում էր տատիկը:

Աղջիկը խմեց դառը հեղուկը:

Լույսը նոր էր բացվել: Տատիկը ննջում էր թոռնիկի մահճակալի մոտ դրված բազկաթոռին: Աղջիկն արթնացավ և քնքշանքով նայեց տատիկին, ապա վերկացավ անկողնուց ու փաթաթվեց նրան:

- Տատիկ, ես քեզ ամպի չափ սիրում եմ,- շշնջում էր նա:

- Իմ լույսը վեր է կացել,- ուրախացավ տատիկը ու սկսեց համբուրել աղջկա խճճված մազերը:

- Տատիկ, կակտուսը բուժեց ինձ,- հայտարարեց թոռնիկը,- ես ցանկանում եմ շնորհակալություն հայտնել նրան:

- Իհարկե, անուշիկս,- ոգևորվեց տատիկը,- արագ հագնվիր:

Նրանք մոտեցան պարտեզի իրենց սիրելի անկյունին: Առաջինը թոռնիկը նկատեց ծաղիկների վերջում գտնվող կակտուսին ու զարմանքից բացականչեց.

- Տես, տատիկ, մեր կակտուսը ինչ սքանչելի ծաղիկ ունի: Հրաշք է, տատիկ, իսկական հրաշք:

Կակտուսի գլխավերևում բացվել էր քնքուշ ու գեղեցիկ ծաղիկ, որն ասես ողջունում էր ապաքինված աղջկան ասելով.

- Մի խաբվիր արտաքին տեսքից, ճանաչիր էությունը ու կհասկանաս, որ տգեղ արտաքինը կարող է թաքցնել գեղեցիկ ներքինը, անօգտակար թվացողը՝ կարող է կյանքի աղբյուր լինել, և փշեծածկ բույսը՝ ծնել հրաշք ծաղիկ...

ԲԱՐԻ ԴԱՇՏԸ

Ոսկեգույն ցորենի դաշտը ծփում էր մեղմ զեփյուռի օրորից և միանալով հանդարդ քամու մեղմահունչ երգին՝ շրջապատը լցնում խաղաղ հանգստությամբ:

Հեռվից լսվեց դաշտին մոտեցող Մարդու ոտնաձայնը: Գյուղի անխոնջ մշակը, բահն ուսին, ամեն օրվա նման մոտեցավ ոսկեծուփ դաշտին, գոհունակությամբ ժպտաց, ապա սկսեց զգուշորեն քայլել հասկերի միջով՝ քթի տակ մրմնջալով իր սիրելի երգը: Կարծես ամեն ինչից գոհ էր, սակայն հանկարծ կանգ առավ, կռացավ, ոսկե հասկերի արանքից պոկեց նենգորեն թաքնված մոլախոտը և գլուխն օրորելով մռթմռթաց. «Ի՜նչ նենգ ու համառն է այս չարությունը: Ես գրեթե ամեն օր գտնում ու պոկում եմ նրան դաշտի տարբեր մասերում: Թվում է, թե նա արմատախիլ է արվել և այլևս չի ծլարձակի, հանգիստ կթողնի իմ Բարի դաշտին, բայց ավա՜ղ, նա համառորեն դուրս է գալիս հողից և փորձում նորից փչացնել հասունացող բերքը»:

Մարդն ուշադիր զննելով քայլեց դաշտում: Գտավ ու պոկեց դժվարությամբ նկատվող մի քանի մոլախոտ ևս, ապա ջրեց դաշտն ու իրիկնամուտին, արևի իջնող շողերի հետ հեռացավ:

Բարի դաշտը երախտագիտությամբ տարուբերեց ոսկե հասկերը ու պատրաստվեց գիշերվա հանգստին: Նա սիրում էր Մարդուն, որը հոգում էր իր մասին, ջրում, մաքրում չար մոլախոտերից և պատրաստ էր շռայլորեն պարգևել նրան կյանքի համար ամիրաժեշտ իր բերքով: Բարի դաշտը վստահ էր. քանի Մարդուն պետք է իր բերքը, ինքը կարող է հանգիստ քնել, համոզված, որ առանց կորուստների կարթնանա արևածագի հետ, կսնվի վերջինիս կենարար լույսով, կխմի կողքից վազող գետակի քացրանուշ ջուրը: Մարդու հետ, Մարդու օգնությամբ ոչ մի չարություն, ոչ մի մոլախոտ չի կարող հաղթել իրեն:

Երկար ժամանակ էր ինչ Մարդը չէր գալիս: Բարի, ոսկեշող դաշտը սմքել էր ջրի պակասից, բայց դիմանում էր: Այդ փոքրիկ, թույլ թվացող մոլախոտն ասես ուժ էր առել, զարմանալի արագությամբ բազմանում էր, մեծանում, փորձում խեղդամահ անել Բարի դաշտին, բայց վերջինը դիմանում էր:

«Ի՞նչ է կատարվում,- տխուր մտորում էր Բարի դաշտը,- ի՞նչպես և ինչո՞ւ է հայտնվում ու արագ տարածվում չարությունը: Մի՞թե բարին այսքան անզոր է չարի առաջ: Որտե՞ղ ես Մա՛րդ, ինչո՞ւ ես մոռացել քո Բարի դաշտը, առանց որի դու դատապարտված ես կործանման»: Եվ օգտվելով փչող քամու թևերից, Բարի դաշտը շփոթված այսուայնկողմ էր տարուբերվում, փորձում ազատվել չար մոլախոտերի մահաշունչ գրկախառնությունից:

Անցնում էին ծանր օրերը: Մոլախոտը համառորեն տարածվում էր Բարի դաշտում, և Մարդու օգնությունից զրկված նրա ոսկեհատ հասկերը մեկ մեկ թոշնում ու գետնին էին տապալվում:

Զգալով Բարի դաշտի անօգնական վիճակը հայտնվեցին դաշտային մկները, չգիտես որտեղից իջավ մորեխների ավերիչ երամը: Շուրջբոլորը տարածվում ու տիրում էր չարության ավերիչ, անպատիժ ոգին, բայց Բարի դաշտը դեռ դիմադրում էր:

Առավոտվա արևը կրկին լուսավորեց ծանր ու մութ գիշեր ապրած Բարի դաշտը, որը անձայն աղաղակում էր իր կորսված ամեն մի ոսկե հատիկի համար: Հեռվից լսվեց դեպի Բարի դաշտը քայլող Մարդու շտապ ոտնաձայնը: Եկան այդ լուսաճաճանչ առավոտն ու Մարդը և Բարի դաշտը հասկացավ, որ միայն Մարդու օգնությամբ, Մարդու հետ ինքը անպայման կհաղթի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գոյը (վիպակ) 3

Պատմվածքներ

Ժպիտը 33

Աղջիկն ու կակտուսը 35

Բարի դաշտը 38

ԱՐՄԱՆ ԱՄՐԻԿՅԱՆ

ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ԳՈՅԸ

АРМАН АМРИКЯН

ВЕЧНЫЙ ГОЙ

ՀԳՄ հրատարակչություն

Տնօրեն՝	ԲԱԳՐԱՏ ԱԼԵՔՅԱՆ
Խմբագիր՝	ԴԱՎԻԹ ՄՈՒՐԱԴՅԱՆ
Գեղ. խմբագիր, նկարիչ՝	ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ԱՎԱԳՅԱՆ
Համակարգչ. աշխ. և էջադրումը՝	ԳԱՅԱՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Վերստուգող խմբագիր՝	ՍԵԹ ԿՈՒՐԱՋՅԱՆ

Տպագրվել է «Արտագերս» հրատարակչությունում:
Տպագրությունը օֆսեթ: Թուղթ՝ օֆսեթ 80 գր.
Չափսը՝ 60x84 1/16, ծավալը՝ 2.5 տպ. մամուլ:
Տպաքանակը՝ 500 օրինակ: